ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՌ ԷԴՎԱՐԴԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԳԼՈԲԱԼ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ:

ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГОР ЭДВАРДОВИЧ ПЕТРОСЯН

РОЛЬ САНКЦИЙ В ГЛОБАЛЬНЫХ И РЕГИОНАЛЬНЫХ ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ.

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

Ереван-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գարիկ Միշայի Քեռյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Ալեքսանդրի Մարգարով քաղաքական գիտությունների թեկնածու Նարեկ Արմենի Սուքիասյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2023 թ. փետրվարի 28-ին, ժամը 15:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում:
Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2023 թ. հունվարի 16-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель:	доктор политических наук, профессор Г. М. Керян
Официальные оппоненты:	доктор политических наук, профессор А. А. Маркаров кандидат политических наук. Н.А. Сукиасян
Ведущая организация:	Российско-Армянский университет

Защита состоится 28 февраля 2023г. в 15:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 16 января.
Научный секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակների ընթացքում պատժամիջոցները դարձել են միջազգային հարաբերությունների սուբյեկտների կողմից տարածաշրջանային և համաշխարհային քաղաքականությունում կիրառվող ամենատարածված գործիքներից: Ոչ կոնվենցիոնալ զինատեսակների զարգացումն ու լայն տարածումը, պետությունների անդամակցումը տարբեր ռազմաքաղաքական դաշինքներին, սահմանափակում են քաղաքական նպատակներին հասնելու համար ռազմական ուժի կիրառման հնարավորությունները կամ դարձնում դրանք անտրամաբանական[1]: Հետսառըպատերազմյան աշխարհակարգում ԱՄՆ-ի համաշխարհային տնտեսական գերիշխանության և «սև ասպետի» բացակայության հանգամանքով պայմանավորված՝ պատժամիջոցների կիրառումը դարձել է գլոբալ քաղաքականության կարևորագույն գործիքներից մեկը: Ասվածի ապացույցն է այն, որ 1990թ.-ից մինչև 2000թ.-ն ընկած ժամանակահատվածում պատժամիջոցներ կիրառվել են 67 անգամ, նույնքան պատժամիջոցներ են կիրառվել 1915-1975թթ.-ի ընթացքում[2]:

2022 թվականին Ռուսաստանի Դաշնության նկատմամբ Արևմուտքի կիրառած պատժամիջոցներն աննախադեպ էին իրենց քանակով, խորությամբ և համաշխարհային քաղաքական գործընթացների վրա ազդեցությամբ: Նշյալ պատժամիջոցների հետազոտությունն ունի առանցքային գործնական և տեսական նշանակություն: Գործնական նպատակներով կարևոր է հետազոտել և բացատրել Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով առաջացող կամ արագացող, գլոբալ քաղաքական գործընթացների էությունը և նորովի վերաձևվող աշխարհակարգի ուժային հավասարակշռության միտումները: Վերոնշյալ պատժամիջոցների հետազոտությունն ունի նաև կարևոր տեսական նշանակություն, քանի որ ոչ միայն կիրառվող պատժամիջոցներն էին աննախադեպ, այլև պատժամիջոցներին դիմադրող պետության տնտեսության ծավալը և պատժամիջոցներին դիմագրավելու ռեսուրսները: Թեման ունի կարևոր քաղաքական նշանակություն Հայաստանի համար, քանի որ դժվար է թերագնահատել հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունները:

Հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանն էլ ունի պատժամիջոցներ գործածելու հարուստ փորձ: Փոխադարձ պատժամիջոցների

---

[1] Տե՛ս KNORR, KLAUS EUGEN. On the Uses of Military Power in the Nuclear Age. Princeton University Press, 1966. JSTOR, www.jstor.org/stable/j.ctt183phj1. Accessed 3 May 2021.

[2] Տե՛ս Gary C. Hufbauer, Jeffrey Schott, Kimberly Ann Elliott, Barbara Oegg "Economic Sanctions Reconsidered" third edition, Peterson Institute for International Economics, USA, 2007 էջ18:

կիրառումը Հայաստանի հյուսիսային հարևան Վրաստանի և ՌԴ-ի միջև ևս մարտահրավերներով է հղի ՀՀ-ի համար: Վրաստանով են անցնում ՀՀ-ՌԴ ապրանքաշրջանառության հիմնական ուղիները: Վրաստանը սերտորեն համագործակցում է Ադրբեջանի և Թուրքիայի հետ, իսկ ՀՀ-ն՝ անդամակցում ԵԱՏՄ-ին: 2008թ.-ի Օգոստոսյան պատերազմից հետո Վրաստանի և ՌԴ-ի միջև խզվել են դիվանագիտական հարաբերությունները, երկու երկրները պարբերաբար միմյանց նկատմամբ կիրառում են տարբեր տեսակի պատժամիջոցներ, իսկ ռուս-վրացական սահմանների փակումը լրջագույն անվտանգային սպառնալիք էր ստեղծել ՀՀ-ի համար: Ռուս-վրացական հարաբերությունները շարունակում են մնալ լարված, այդ լարվածությունը վերածվում է փոխադարձ պատժամիջոցների սպառնալիքների, որը անվտանգային և տնտեսական նոր մարտահրավերներ է առաջացնում ՀՀ-ի անվտանգային համակարգի համար:

Պատժամիջոցների ուսումնասիրության տեսանկյունից ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ, Հայաստանի անկախացման գործընթացին զուգահեռ, Հայաստանի հարևան Ադրբեջանը և Թուրքիան համապարփակ առևտրային ու տնտեսական պատժամիջոցներ են կիրառել ՀՀ-ի նկատմամբ՝ փորձելով տնտեսական շրջափակման մեջ առնել Հայաստանին և պարտադրել սեփական քաղաքական կամքը: Ադրբեջանի պարագայում պատժամիջոցները տարածվել են նաև հայկական ծագման արտադրանքի նկատմամբ էմբարգոյի միջոցով: Արցախյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանն ու Թուրքիան շարունակում են Հայաստանի շրջափակման քաղաքականությունը, և առաջանում է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ վերագնահատելու վերջիններիս կողմից Հայաստանի շրջափակման փորձի հետևանքներն ու առկա միտումները:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ՀՀ-ի նկատմամբ վարվող թշնամական քաղաքականության և տնտեսական շրջափակման պայմաններում ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունի Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) հետ սերտ համագործակցությունը: Իրանը ևս գտնվում է արևմտյան պատժամիջոցների ազդեցության տակ և առաջանում է անհրաժեշտություն՝ հետազոտելու ԻԻՀ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների քաղաքական ազդեցությունը՝ Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության ձևավորման վրա: Այսպիսով, ՀՀ-ում պատժամիջոցների հետազոտության օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում գիտականորեն ուսումնասիրելու պատժամիջոցների կիրառման նպատակները, հիմքերն ու մեխանիզմները, գնահատելու պատժամիջոցների արդյունավետությունը և վերջապես՝ ուսումնասիրելու պատժամիջոցներին դիմագրավելու քաղաքականությունը:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Մասնագիտական գրականությունում պատժամիջոցների քաղաքագիտական տեսության հիմնարար աշխատություն է համարվում Յոհան Գալթունգի հեղինակած «Միջազգային տնտեսական պատժամիջոցների ազդեցության մասին. Ռոդեզիայի օրինակով»

գիտական հոդվածը[3]: Սույն հոդվածի շրջանակում հեղինակը ներկայացրել է պատժամիջոցների ազդեցության մեխանիզմների տեսական մոդելը: Հաջորդ տասնամյակների ընթացքում պատժամիջոցների թեմայով հրատարակվել են տասնյակ գրքեր և հարյուրավոր վերլուծական աշխատություններ, բայց պատժամիջոցների մասին ակադեմիական գրականության դասական աշխատությունների քանակը շարունակում է մնալ սահմանափակ: 1968թ.-ին Ուփսալայի համալսարանի պրոֆեսոր Պիտեր Ուալերսթայնը հրապարակում է «Տնտեսական պատժամիջոցների բնութագրերը» հոդվածը, որում առաջին անգամ խոսում է պատժամիջոցների մոդելավորման տիպաբանության մասին[4]:

1980-ական թվականների պատժամիջոցներին նվիրված հետազոտությունների նյութերը դարձան առավել համընդգրկուն: Մարգարեթ Դոքսին 1980թ.-ին Լոնդոնի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում հրապարակել է թեմայի վերաբերյալ առաջին գիտական գիրքը, որը պատժամիջոցների կիրառության մասին ֆունդամենտալ աշխատություններից է[5]: Իսկ Պրինստոնի համալսարանի միջազգային հարաբերությունների պրոֆեսոր Դեյվիդ Բոլդվինի հեղինակած «Տնտեսական դիմակայություն» գիրքը Քաղաքական գիտությունների ամերիկյան ասոցիացիայի (APSA) կողմից ճանաչվել է 1985 թվականի լավագույն քաղաքագիտական հրատարակություն: Հեղինակը նշյալ աշխատությունում ընդլայնում է պատժամիջոցների հետազոտության տիրույթը և պնդում, որ տնտեսական պատժամիջոցների հայեցակարգը պետք է ընդլայնվի՝ ներառելով «տնտեսական դիմակայության» բոլոր ասպեկտները[6]:

1985 թվականին ԱՄՆ-ի Պետերսոնի անվան Միջազգային տնտեսական ինստիտուտի հրատարակած «Վերանայված տնտեսական պատժամիջոցներ» գրքի համահեղինակ հետազոտողներ Հարրի Հուֆբաուերը, Ջեֆֆրի Շոթը, Քիմբերլի Էլիոթը կատարել են պատժամիջոցների և նրանց մեխանիզմների հետազոտության ծավալուն ուսումնասիրություն, որը վերահրատարակվել է նաև

---

[3]Տե՛ս On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia Author(s): Johan Galtung Source: World Politics, Vol. 19, No. 3 (Apr., 1967), pp. 378-416 Published by: Cambridge University Pres

[4] Wallensteen, Peter. “Characteristics of Economic Sanctions.” Journal of Peace Research 5, no. 3 (September 1968): 248–67.

[5] Տե՛ս Doxey M.P. (1987) “The Impact of Sanctions. In: International Sanctions in Contemporary Perspective”, Palgrave Macmillan, London., 1987, էջ 92

[6] Baldwin D., “Economic Statecraft”, Princeton, N. J.: Princeton University Press, 1985, p. 95

1990 և 2007 թվականներին[7]: Հեղինակներն իրենց ուսումնասիրության շրջանակներում իրականացրել են առաջին աշխարհամարտից հետո կիրառված պատժամիջոցների 174 իրավիճակային հետազոտություն (case study):

1990-ական թվականներին պատժամիջոցների կիրառման պրակտիկայի ընդարձակմանը զուգահեռ ավելանում էին նաև դրանց վերաբերյալ հետազոտությունները: Որոշ հեղինակներ 1990-2000 թթ.-ը անվանում են նաև պատժամիջոցների տասնամյակ[8]: Այս ժամանակահատվածում են տպագրվել պատժամիջոցների քաղաքագիտական հայեցակարգի ընդլայնմանը նպաստող այնպիսի կարևոր աշխատանքներ, ինչպիսիք են՝ Թաֆթսի համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի միջազգային քաղաքականության ամերիկացի պրոֆեսոր Դենիել Դրեզների հեղինակած «Պատժամիջոցային պարադոքս. տնտեսական դիմակայություն և միջազգային հարաբերություններ» գիրքը»[9], Նեթա Քրաուֆորդի և Աուդի Քլոցի «Տնտեսական պատժամիջոցներ» աշխատությունը, որտեղ հեղինակները ներկայացնում են պատժամիջոցների կիրառման մեխանիզմների առանձնահատկությունները Հարավաֆրիկյան Հանրապետությունում, որն, ըստ հեղինակների, հանգեցրեց ապարտեիդ ռեժիմի անկմանը[10]:

1990-ականներին նաև ծագում է պատժամիջոցների վերաբերյալ ակադեմիական բանավեճ ամերիկյան հետազոտողների միջև[11]: Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր, քաղաքագետ Ռոբերտ Փեյփը համարում էր, որ պատժամիջոցներն անարդյունավետ գործիք են, քանի որ ժամանակակից պետությունների իշխանությունները տիրապետում են տարբեր վարչական մեթոդների, որոնց միջոցով կարողանում են մեղմել պատժամիջոցների ազդեցությունը կամ դրա ծանրությունը դնել քաղաքական հակառակորդների

---

[7] Տե՛ս Gary Clyde Hufbauer, Jeffrey Schott, Kimberly Ann Elliott, Barbara Oegg "Economic Sanctions Reconsidered" third edition Edition, Peterson Institute For International Economics, 2009.

[8] Տե՛ս David Cortright and George A. Lopez "The Sanctions Decade: Assessing UN Strategies in the 1990s" June 15, 2000:

[9] Տե՛ս Drezner, D. "*The Sanctions Paradox: Economic Statecraft and International Relations"* (Cambridge Studies in International Relations). Cambridge: Cambridge University Press, 1999. doi:10.1017/CBO9780511549366 էջ 2-3:

[10] Տե՛ս Neta C. Crawford and Audie Klotz "How Sanctions Work Lessons from South Africa", MACMILLAN PRESS LTD, 1999.

[11] Տե՛ս Baldwin, David A., and Robert A. Pape. "Evaluating Economic Sanctions." *International Security*, vol. 23, no. 2, 1998, pp. 189–98

ուսերին[12]: Պատժամիջոցների արդյունավետության շուրջ առկա բանավեճին առավել մանրամասն անդրադարձել ենք ատենախոսության 1.1 ենթագլխում:

Մասնագիտական գրականությունում առկա են նաև պատժամիջոցների առանձին ասպեկտներին նվիրված աշխատություններ: Միջազգային և անվտանգության հարցերի գերմանական ինստիտուտի՝ ամերիկյան հետազոտությունների ղեկավար դոկտոր Պիտեր Ռուդոլֆը առանձնացնում է համակարգի փոփոխությանը միտված պատժամիջոցների կիրառման պլյուրալիստական մոդելը, որը ենթադրում է պատժամիջոցների կիրառում թիրախավորված խմբերի նկատմամբ, քաղաքական վարչակարգի փոփոխության հասնելու նպատակով[13]: Իսկ Մարի Էլեն Օքոնելն իր աշխատությունում լավագույնս ներկայացնում է պատժամիջոցների իրավական խնդիրները[14]: Թեմայի վերաբերյալ վերջին տարիներին գրված լավագույն աշխատությունների շարքին կարելի է դասել նաև Լի Ջոնսի[15], Ռոբերտ Բլեքվիլի և Ջենիֆեր Հարիսի[16] ուսումնասիրությունները: Վերջին տասնամյակում պատժամիջոցների վերաբերյալ հետազոտություններն ակտիվացել են նաև Ռուսաստանի Դաշնությունում: Պատժամիջոցների վերաբերյալ ռուսական ակադեմիայի լավագույն աշխատություններից են Ռուսաստանի միջազգային հարաբերությունների խորհրդի (RIAC) ծրագրի տնօրեն, Վալդայան ակումբի Եվրոատլանտյան անվտանգության ծրագրի ղեկավար Իվան Տիմոֆեևի աշխատությունները[17]:

Կարևոր ենք համարում ընդգծել նաև, որ պատժամիջոցների կիրառումն ուղղակիորեն կապված է համաշխարհային քաղաքականությունում ուժային հավասարակշռության փոփոխության կամ վերջինիս պահպանման հետ: Ուստի, թեմայի ուսումնասիրության շրջանակներում օգտագործել ենք նաև Միջազգային

---

[12] Տե՛ս Pape, R. “Why Economic Sanctions Do Not Work” *International Security, 22*(2), 90-136,1997. էջ 93.

[13] Տե՛ս **Peter Rudolf**, “Sanctions in International Relations: On the Current State of Research” - Berlin, 2007, էջ 13:

[14] Տե՛ս Mary Ellen O'Connell, “Debating the Law of Sanctions, European Journal of International Law”, Volume 13, Issue 1, February 2002, Pages 63–79.

[15] Տե՛ս Lee Jones "Societies Under Siege Exploring How International Economic Sanctions (Do Not) Work", Oxford University Press, 2015.

[16] Роберт Блэквилл, Дженнифер М. Харрис "Война иными средствами", Переводчик: Королев Кирилл Михайлович, Издание на русском языке AST Publishers, 2017, էջ 254.

[17] Տե՛ս Тимофеев И.Н. ЭКОНОМИЧЕСКИЕ САНКЦИИ КАК ПОЛИТИЧЕСКОЕ ПОНЯТИЕ. Вестник МГИМО-Университета. 2018;(2(59)):26-42.

հարաբերությունների դասական աշխատություններ, ինչպիսիք են Քենեթ Վոլցի[18] և Ջոն Միրշեյմերի[19] ուսումնասիրությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն ատենախոսության *օբյեկտը* միջազգային հարաբերությունների սուբյեկտների կողմից քաղաքական նպատակներով կիրառվող պատժամիջոցների երևույթն է, իսկ *առարկան՝* Հայաստանի և նրա անվտանգային համակարգի համար ռազմավարական կարևորություն ունեցող պետությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների և դրանց ազդեցության ուսումնասիրությունն է:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է վեր հանել պատժամիջոցների հարուցած համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական վերափոխումները և գնահատել դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության վրա:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ հետազոտական խնդիրները.

Խնդիր 1 Հստակեցնել պատժամիջոցների քաղաքագիտական տեսահայեցակարգերը, որի շրջանակներում՝

- ձևակերպել աշխատությունում օգտագործվող պատժամիջոց հասկացության սահմանումը,
- վերլուծել թեմայի վերաբերյալ առկա ակադեմիական գրականությունը,
- կատարել միջազգային քաղաքականությունում պատժամիջոցների կիրառման պատմական վերափոխման ուսումնասիրություն,
- տարանջատել պատժամիջոցների կիրառման քաղաքական նպատակները,
- ուսումնասիրել պատժամիջոցների կիրառման մեխանիզմները

Խնդիր 2 Բացահայտել Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների քաղաքական տրամաբանությունն ու ազդեցությունը գլոբալ քաղաքական գործընթացների վրա: Խնդրի շրջանակներում՝

- վեր հանել պատժամիջոցների դերը Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների վերափոխման գործընթացում,
- ուսումնասիրել Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները պայմանավորող նպատակները,
- Վերլուծել Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների տնտեսական փոփոխականները:

---

[18] Kenneth N. Waltz "Theory of international politics", Columbia University press, reissued by Waveland Press, 2010

[19] John Mearsheimer “The Tragedy of Great Power Politics”, W. W. Norton & Company, New York, 2001.

- վերլուծել Ռուսաստանի նկատմամբ Արևմուտքի կիրառած պատժամիջոցների և Ռուսաստանի կողմից Արևմուտքի նկատմամբ կիրառվող հակաքայլերի արդյունավետության քաղաքատնտեսական փոփոխականները,
- պարզաբանել Ռուսաստան-Արևմուտք պատժամիջոցային «պատերազմի» գլոբալ քաղաքական հետևանքները:

Խնդիր 3 Ուսումնասիրել Հայաստանի և Հայաստանի համար ռազմավարական կարևորություն ունեցող պետությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ու վերլուծել դրանց ազդեցությունը: Նշված խնդրի շրջանակներում՝

- ուսումնասիրել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման փորձի՝ որպես պատժամիջոցի քաղաքական նպատակները և վերլուծել դրանց ազդեցությունն ու հետևանքները,
- վերլուծել Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի կողմից և Իրանի նկատմամբ Արևմուտքի սահմանած պատժամիջոցների նպատակներն ու տարածաշրջանային քաղաքական հետևանքները,
- պարզաբանել Վրաստանի, Իրանի և Ռուսաստանի նկատմամբ սահմանված պատժամիջոցների ազդեցությունը Հայաստանի վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության իրականացման նպատակով օգտագործվել են ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդներ: Խնդրո առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացում ստանալու, ինչպես նաև թեմայի հետազոտությամբ զբաղված հեղինակների փորձը և նվաճումները, նրանց աշխատություններում առկա հակասություններն ու փոխլրացումները, լրամշակումները ուսումնասիրելու նպատակով իրականացրել ենք թեմայի վերաբերյալ առկա գրականության վերլուծություն (literature review): Փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդի (content analyses) կիրառությունն օգնել է վերլուծել տարբեր պետությունների կողմից պատժամիջոցների կիրառման իրավական և քաղաքական հիմնավորումները, իսկ քաղաքական դերակատարների ելույթների խոսույթային վերլուծությունը (discourse analyses) նպաստել է պատժամիջոցների կիրառման նպատակների բացահայտմանը: Համեմատական վերլուծության մեթոդի կիրառմամբ ուսումնասիրել ենք նաև թեմային առնչվող արևմտյան և ռուսական առաջատար մասնագետների վերլուծական աշխատանքները:

Աշխատանքի շրջանակներում իրականացված առանձին թեմատիկ ուսումնասիրություններում օգտագործել ենք նաև դեդուկտիվ մեթոդը՝ թեմայի մասին մասնագիտական գրականությունում առկա իմացաբանական համընդհանուր գիտելիքներն ուսումնասիրությունում տեղայնացնելու համար:

Թեմայի վերաբերյալ կատարված տեսական ամենաածավալուն ակադեմիական հետազոտության հեղինակների՝ Գ. Հոֆբաուերի, Ջ. Սքոթի և Ք. Էլիոթի (այսուհետ Հ.Ս.Է.) կողմից մշակված պատժամիջոցների

արդյունավետության քաղաքական և տնտեսական փոփոխականներն օգտագործել ենք որպես ուղեցույց՝ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ազդեցության էմպիրիկ չափումն իրականացնելու համար: Տնտեսական և հանրային կարծիքի հարցումների մասին վիճակագրական տվյալների վերլուծությունը թույլ է տվել հասկանալ պատժամիջոցների հասցրած վնասի և պատժամիջոցներին դիմակայող պետության իրականացրած հակաքայլերի արդյունավետության մասին:

Ուսումնասիրության իրականացման ընթացքում օգտվել ենք առաջնային աղբյուրներից՝ ՄԱԿ-ի կանոնադրություն, Սպիտակ տան և Կրեմլի պաշտոնական հաղորդագրություններ, օրենսդրական ակտեր և այլն: Ուսումնասիրության շրջանակներում կիրառել ենք նաև քանակական հետազոտական մեթոդներ, ինչպիսիք են առևտրատնտեսական տվյալների, սոցիալական հարցումների արդյունքների տվյալների վերլուծությունները: Այս նպատակով օգտվել ենք պետական և վերլուծական ծառայությունների տվյալներից՝ Հայաստանի Վիճակագրական կոմիտե, Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնը, Լևադա կենտրոնը ՌԴ-ում, տասնյակ այլ ֆինանսական և տնտեսական վիճակագրություն ներկայացնող կայքեր: Ստացված տվյալները ենթարկել ենք սինթեզի, համեմատության և վերլուծության:

Աշխատանքի գիտական նորույթը: Սույն աշխատանքը հայ քաղաքագիտական շրջանակներում առաջին հետազոտությունն է, որը համալիր և համընդգրկուն կերպով անդրադառնում է պատժամիջոցների թեմային քաղաքագիտական տեսանկյունից: Ներկայացվող հետազոտությունն ու դրանում առկա եզրակացությունները կարևոր են ինչպես տեսական և իմացաբանական գիտելիքի հարստացման, այնպես էլ քաղաքական կիրառելիության նպատակներով:

- Ուսումնասիրելով թեմատիկ գրականությունը և հիմնվելով սեփական ուսումնասիրությունների վրա՝ մենք պատժամիջոցների քաղաքագիտական հայեցակարգայնեցման նոր՝ ունիվերսալ սահմանում ենք ձևակերպել միջազգային հարաբերություններում կիրառվող «պատժամիջոց» եզրույթի համար, որը գալիս է լրացնելու թեմայի մասին քաղաքագիտական գրականությունում առկա բացը: Մեր ձևակերպմամբ՝ *միջազգային պատժամիջոցները պետությունների կամ պետությունների միավորման կողմից միջազգային հարաբերությունների մեկ այլ սուբյեկտի նկատմամբ սահմանափակումների կիրառումն է, որը միտված է հարկադրելու պատժամիջոցների ենթարկվողին՝ փոփոխել իր քաղաքականությունը, սահմանափակել նրա կարողությունները կամ պատժել՝ կիրառողի ընկալմամբ անընդունելի վարքագիծ դրսևորելու համար*:
- Ատենախոսության շրջանակներում գիտականորեն վեր ենք հանել պատժամիջոցների կիրառման քաղաքական նպատակները,

մեխանիզմներն ու տիպերը և պատժամիջոցների արդյունավետության ու դրանց դիմակայելու համար անհրաժեշտ գործոնները:

- Ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ազդեցությունն ու դրանց դիմակայելու՝ ռուսական ռազմավարության գործոնները՝ հայտնաբերել ենք, որ պատժամիջոցների կիրառումը թևակոխել է նոր շրջափուլ՝ պայմանավորված Արևմուտքի կողմից պատժամիջոցների ենթարկված պետությանը՝ համաշխարհային քաղաքականությունում Չինաստանի, Հնդկաստանի և այլ ֆինանսատնտեսական ու քաղաքական կարողություններ ունեցող տարածաշրջանային տերությունների աջակցության հանգամանքով: Այսպիսով, գնահատվել են Արևմուտքի կիրառած պատժամիջոցների արդյունավետության նվազման միտումները:
- Կանխատեսվել է պատժամիջոցների կիրառման և դրանց արդյունավետության դինամիկայի միտումները, համաձայն որի պատժամիջոցների կիրառումն ունենալու է քանակական աճի միտում, սակայն՝ արդյունավետության նվազում, պայմանավորված՝ տարածաշրջանային տերությունների առավել պատրաստված լինելու հանգամանքով և ոչ արևմտյան պետություններում տարածաշրջայնացման գործընթացները ակտիվացմամբ:
- Առաջին անգամ բացահայտված են Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով պայմանավորված տարածաշրջանային ուժային վերադասավորման միտումները Հարավային Կովկասում և նշված գործընթացից բխող ռիսկերն ու հնարավորությունները Հայաստանի համար:
- Առաջինն է հայրենական քաղաքագիտության մեջ, որ հայկական շահերի տեսանկյունից մանրամասն ներկայացնում է Ռուսաստանի Դաշնության կողմից Վրաստանի նկատմամբ կիրառված տնտեսական պատժամիջոցների քաղաքական հետևանքները, որոնք հանգեցրին Վրաստանից ռուսական կապիտալի արտահոսքին և Թուրքիայի ու Ադրբեջանի ազդեցության մեծացմանը տարածաշրջանում:
- Առաջին անգամ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը համալիր հետազոտվել է պատժամիջոցների քաղաքագիտական հայեցակարգի շրջանակներում: Ուսումնասիրության շրջանակներում քննվում են այդ երկրների կողմից Հայաստանի շրջափակմանն ուղղված քաղաքականության նպատակները, դրանց հետևանքներն ու արդի միտումների տակ թաքնված գործոնները:

- Ներկայացրել ենք պատժամիջոցների բացասական հետևանքների մեղմացմանն ուղղված կիրառական առաջարկներ, որոնք հիմնված են կատարված հետազոտությունների եզրակացությունների վրա:

Աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության ընդհանուր նշանակությունը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում առանցքային դերակատարություն ունեցող պատժամիջոցների մասին գիտական նոր գիտելիք ստեղծելու, թեմայի գիտական հասկացվածությունը խորացնելու մեջ է: Աշխատանքը ներկայացնում է միջազգային հարաբերություններում ոչ ռազմական հարկադրանքի պատմական ակունքների, կիրառման նպատակների և մեխանիզմների, դրանց արդյունավետության չափման համար հիմնային գիտելիքներ, մեթոդներ և առկա գիտական գործիքակազմի թեստավորման արդյունքներ: Հաշվի առնելով գիտաճյուղի միջազգային բնույթը՝ աշխատանքն ու դրա եզրակացությունները կարող են օգտակար լինել քաղաքագիտական և միջազգային հարաբերությունների գծով, Հարավային Կովկասի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի քաղաքականությամբ զբաղվող հետազոտողների համար ոչ միայն Հայաստանում, այլև դրա սահմաններից դուրս: Աշխատանքի առանձին հատվածներ կարող են նաև կարևոր նշանակություն ունենալ քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ուսանողների և դասախոսների համար, ինչպես նաև օգտագործվել ուսումնական գործընթացում:

Աշխատանքը կարող է նաև ունենալ կարևոր նշանակություն ակադեմիական շրջանակներից դուրս, քանի որ այն դիալեկտիկական ամբողջականությամբ ներկայացնում է Հայաստանի արտաքին քաղաքականության և անվտանգության համար կարևոր գործընթացների էությունը: Աշխատանքը կարող է արդյունավետ լինել ՀՀ արտաքին և անվտանգային քաղաքականություն մշակողների և որոշում կայացնողների համար, հայեցակարգեր և որոշումներ ընդունելու գործում:

- Առաջին անգամ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը համալիր հետազոտվել է պատժամիջոցների քաղաքագիտական հայեցակարգի շրջանակներում: Ուսումնասիրության շրջանակներում քննվում են այդ երկրների կողմից Հայաստանի շրջափակմանն ուղղված քաղաքականության նպատակները, դրանց հետևանքներն ու արդի միտումների տակ թաքնված գործոնները:
- Ներկայացրել ենք պատժամիջոցների բացասական հետևանքների մեղմացմանն ուղղված կիրառական առաջարկներ, որոնք հիմնված են կատարված հետազոտությունների եզրակացությունների վրա:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից: Թեկնածուական ատենախոսության տեքստային ծավալը 189 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, մանրամասն ներկայացված են թեմայի գիտական մշակվածությունն ու հետազոտության տեսամեթոդական հիմքերը, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան: Ներածության վերջում ներկայացված են աշխատանքի գիտական նորույթը, գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում, որը վերնագրված է **«Պատժամիջոցները՝ որպես քաղաքագիտական հետազոտությունների առարկա»**, հստակեցվել են թեմայի վերաբերյալ անորոշ հասկացություններն ու առարկայի սահմանները, ուսումնասիրվել են պատժամիջոցների վերափոխման գործընթացը, և առաջ են քաշվել պատժամիջոցների կիրառման տեսամեթոդական հիմքերը:

Գլխի առաջին՝ **«Պատժամիջոց հասկացության քաղաքագիտական տեսահայեցակարգերը»** ենթագլխում հիմնավորվում է պատժամիջոցների քաղաքագիտական հայեցակարգով ուսումնասիրության առաջնահերթությունը: Ներկայացվում է թեմայի վերաբերյալ ներհայեցակարգային բանավեճի վերլուծությունը, հստակեցվում է աշխատանքի տեղը նշված բանավեճի շրջանակներում: Ենթագլխի շրջանակում առաջ է քաշվել միջպետական հարաբերություններում պատժամիջոցների հետևյալ սահմանումը. «միջազգային պատժամիջոցը պետությունների կամ պետությունների միավորման կողմից մեկ այլ պետության կամ կազմակերպության նկատմամբ սահմանափակումների կիրառումն է, որը միտված է հարկադրելու պատժամիջոցների օբյեկտ պետությանը փոփոխելու իր քաղաքականությունը, սահմանափակելու նրա կարողությունները կամ պատժելու նրան՝ կիրառողի ընկալմամբ անընդունելի վարքագծի դրսևորման համար»: Ենթագլխի շրջանակներում հստակեցվում է նաև պատժամիջոցների տեղը «փափուկ» և «կոշտ» ուժի հայեցակարգերի միջակայքում:

Առաջին գլխի երկրորդ՝ «**Պատժամիջոցների կիրառման ինստիտուցիոնալացումը**» ենթագլխում ներկայացվել են միջպետական քաղաքական գործընթացներում պատժամիջոցների կիրառման ծագումն ու զարգացման փուլերը, ուրվագծվել են այն գործոններն ու փոփոխականները, որոնք պատմական տարբեր շրջափուլերում ազդել են միջպետական հարաբերություններում պատժամիջոցների գործածման վերափոխման վրա: Վերլուծվել է նաև պատմական տարբեր փուլերում պատժամիջոցների ազդեցությունն ու ընդգծվել կարևորությունը՝ քաղաքական իրադարձությունների զարգացման վրա:

Երրորդ՝ **«Պատժամիջոցների կիրառման նպատակներն ու մեխանիզմները ժամանակակից միջպետական հարաբերություններում»**

ենթագլխում քննարկվում են միջազգային հարաբերությունների տարբեր սուբյեկտների կողմից պատժամիջոցներ գործածելու պաշտոնական՝ լեգալիստական-քաղաքական և ոչ պաշտոնական՝ քաղաքական նպատակները: Ներկայացվում են առաջադրված նպատակներին հասնելու համար կիրառվող պատժամիջոցների մեխանիզմները, ինչպիսիք են՝ ֆինանսական, տնտեսական, դիվանագիտական և հաղորդակցային: Վերլուծվել են պատժամիջոցների կիրառման առանձին դեպքերում դրանց մեխանիզմների գործառույթները:

Աշխատանքի երկրորդ՝ **«Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցները գլոբալ քաղաքական գործընթացների համատեքստում»** գլխում վերլուծվել է Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների քաղաքական տրամաբանությունն ու ազդեցությունը գլոբալ քաղաքական գործընթացների վրա: Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների արդյունավետությունը չափելու համար վերլուծել ենք ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցների քաղաքական նպատակները, նրանց հնարավոր կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքական ազդեցությունը:

Գլխի առաջին՝ **«ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերափոխումը»** ենթագլխում ուսումնասիրվել է Ռուսաստանի նկատմամբ Արևմուտքի վարած պատժամիջոցային քաղաքականության վերափոխման գործընթացը ՌԴ-ի անկախացման շրջանից մինչ հետազոտական աշխատանքի պահը: Ենթագլխում առանձնացվել և ուսումնասիրվել են ՌԴ նկատմամբ պատժամիջոցների կիրառման նպատակները, ինչպիսիք են՝ միջազգային մարդասիրական իրավունքը, կիրառող պետությունների ներքաղաքական զարգացումները, տարածաշրջանում ուժային հավասարակշռության և էներգետիկ ռեսուրսների շուրջ մրցակցությունը: Ըստ նպատակների առանձնացվել են նաև ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցների տեսակները՝ ֆինանսական, տնտեսական, դիվանագիտական, տեխնոլոգիական: Կատարված ուսումնասիրության արդյունքում ենթագլխում եկել ենք այն եզրակացության, որ 2022 թ.-ից ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցները միտված են ոչ միայն Ուկրաինայի միջազգայնորեն ճանաչված տարածքներից ռուսական զորքերի դուրսբերմանը և ռազմական գործողությունների դադարեցմանը, այլև ՌԴ-ի սոցիալ-տնտեսական համակարգի կազմալուծմանը և քաղաքական համակարգի փոփոխությանը, միջազգային մեկուսացման միջոցով ՌԴ–ի քաղաքական ազդեցության նվազմանը: Ենթագլխի շրջանակներում վերլուծվել են նաև պատժամիջոցներին դիմագրավելու ՌԴ հակաքայլերն ու դրանց արդյունավետությունը:

Երկրորդ գլխի՝ **«ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների տնտեսական փոփոխականները»** վերնագրով երկրորդ ենթագլխում վերլուծել ենք Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքների հնարավոր ազդեցությունը: Այդ նպատակով, նախ իրականացրել ենք

տնտեսական գործոնների չափում՝ հիմնվելով Գ. Հոֆբաուերի, Ջ. Սքոթի և Ք. Էլիոթի պատժամիջոցների հաջողության համար առավելապես կարևորվող տնտեսական փոփոխականների մոդելի վրա.

1) պատժամիջոց կիրառող պետության/պետությունների ՀՆԱ-ն և համեմատել ենք ռուսական տնտեսության ՀՆԱ-ի հետ, առանձնացրել ենք վերջինիս կառուցվածքային կարևոր տարրերը,

2) վերլուծել ենք Ռուսաստանի և պատժամիջոցներ կիրառող պետությունների միջև գոյություն ունեցած առևտրատնտեսական կապերի կառուցվածքը,

3) դիտարկել ենք ռուսական տնտեսության առավել զգայուն ոլորտների նկատմամբ կիրառված պատժամիջոցներն ու ցույց տվել դրանց կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հնարավոր հետևանքները:

Ենթագլխի շրջանակներում դիտարկվել են նաև Ռուսաստանի մշակած տնտեսական հակաքայլերը, որոնք նշանակալի գործիք են եղել պատժամիջոցներին դիմակայելու գործում: Ենթագլխում ներկայացվել է պատժամիջոցների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը: Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանին հաջողվել է կարճաժամկետ հեռանկարում մինիմալացնել պատժամիջոցների հետևանքները, երկարաժամկետ հեռանկարում այն կարող է հանգեցնել տնտեսության լճացման: Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներն ունեցել են նաև տնտեսական գլոբալ հետևանքներ, ինչպիսիք են էներգակիրների ճգնաժամն ու համաշխարհային գնային սղաճը: Սակայն, պատժամիջոցները և էներգակիրների ճգնաժամը ստեղծում են նոր հնարավորություն ռ-էվոլյուցիայի՝ արագ էվոլյուցիայի համար: Ռուսական էներգակիրներից հրաժարվելը հանգեցնում է էներգակիրների գների կտրուկ թանկացման, որն արագացնելու և առավել մրցակցային է դարձնելու այլընտրանքային էներգիայի ոլորտի զարգացումը, մեծանալու են միջուկային և վերականգնվող էներգիայի աղբյուրները Արևմուտքում: Ենթագլխում հիմնականում օգտագործվել են հետազոտության քանակական մեթոդներ՝ տնտեսական և վիճակագրական տվյալների վերլուծությունները:

Երրորդ՝ **«Ռուսաստանի դեմ պատժամիջոցային «պատերազմի» քաղաքական փոփոխականներն ու գլոբալ հետևանքները»** ենթագլխում վերլուծել ենք Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների գլոբալ քաղաքական հետևանքները: Վերլուծությունը հիմնված է հետևյալ քաղաքական փոփոխականների ուսումնասիրության վրա՝

Իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ Արևմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ 2014 թ.-ից կիրառվող պատժամիջոցները կանխորոշել էին նոր պատժամիջոցների կարճաժամկետ անարդյունավետությունը, քանի որ ՌԴ-ն հնարավորություն էր ստացել նախապես պատշաճ պատրաստվելու երկարաժամկետ դիմակայության: Հանգել ենք նաև եզրակացության, որ աննախադեպ է ոչ միայն Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող

պետությունների համախմբումը, այլև վերջին տասնամյակների համար աննախադեպ է Ռուսաստանին աջակցող «սև ասպետների» քանակը, որը հիմք է տալիս պնդելու, որ պատժամիջոցների կիրառումը անցում է կատարել նոր շրջափուլ: Իրականացված վերլուծության հիմքով հանգել ենք այն եզրակացության, որ ապագայի հակամարտություններում պատժամիջոցների կիրառումը մեծանալու է, սակայն դրանց արդյունավետությունն առավել կասկածելի է դառնալու: Իսկ տարածաշրջանային առաջատար պետությունների կողմից պատժամիջոցներին դիմակայելու վճռականությունն արագացնելու է առանձին ինտեգրացիոն գործընթացներն առանձին տարածաշրջաններում:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **«Գլոբալ և ռեգիոնալ պատժամիջոցային քաղաքականության ազդեցությունը Հայաստանի վրա»**: Գլխում համակողմանիորեն քննվել է Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի, նկատմամբ տարվող շրջափակման քաղաքականությունը: Ատենախոսության երրորդ գլխում ամփոփված է ՌԴ-ի և ԻԻՀ-ի նկատմամբ Արևմուտքի կողմից կիրառվող և Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի կողմից կիրառվող պատժամիջոցների քաղաքական ազդեցությունը տարածաշրջանի և Հայաստանի վրա:

Երրորդ գլխի առաջին՝ **«Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման քաղաքական նպատակներն ու դրանց հետևանքները»** ենթագլխում ուսումնասիրել ենք Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Հայաստանի նկատմամբ կիրառվող շրջաափակման քաղաքականությունը: Ուսումնասիրության շրջանակներում օգտագործվել են առաջնային և երկրորդային տասնյակ աղբյուրներ՝ Հայաստանի, Թուրքիայի ու Ադրբեջանի քաղաքական առաջնորդների տասնյակ ելույթներ, վիճակագրական տվյալներ, այլ վերլուծաբանների աշխատություններ: Ենթագլխի շրջանակներում տարանջատեն ենք Հայաստանի շրջափակման արդյունավետության վերափոխման փուլերն ու շրջափակման քաղաքական նպատակները: Ենթագլխում վերլուծել ենք այն գործոնները, որոնց միջոցով Հայաստանին հաջողվեց հաղթահարել տնտեսական մեկուսացումը: Արձանագրված է, որ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման երկարաժամկետ քաղաքական նպատակները չեն իրագործվել, ինչի հետևանքով Ադրբեջանը Թուրքիայի անվերապահ աջակցությամբ դիմել է ռազմական ուժի կիրառմանը: Հայաստանի մասնակի շրջափակումը շարունակվում է նաև 44-օրյա պատերազմից հետո: Գիտակցելով ինչպես մասնակի շրջափակման, այնպես էլ տնտեսական էքսպանսիայի միջոցով Հայաստանին ծնկի բերելու անհնարինությունը՝ Ադրբեջանը ցանկանում է առավել նեղացնել Հայաստանի շրջափակման օղակը՝ փորձելով վերահսկողություն սահմանել կամ հնարավորինս խոցելի դարձնել Հայաստանի ռազմավարական ճանապարհները:

Երկրորդ՝ **«Վրաստանի և Իրանի շուրջ ձևավորված պատժամիջոցային հանգույցի ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջայնացման**

գործընթացների վրա» ենթագլխում վերլուծվել են Վրաստանի և Իրանի նկատմամբ պատժամիջոցների պատճառով առաջացած քաղաքական հետևանքները այդ երկրներում և տարածաշրջանում: Պատժամիջոցների արդյունավետության գնահատումն իրականացվել է ատենախոսության առաջին գլխում առաջ քաշված տեսական մոդելի հիմքով: Ենթագլուխը կազմված է երկու հիմնական հատվածներից: Առաջին հատվածում գնահատվել է Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների տարածաշրջանային քաղաքական ազդեցությունը: Վեր են հանվել Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների հետևյալ հիմնական նպատակները՝

1) կասեցնել Վրաստանի և Արևմուտքի միջև ինտեգրացիան,

2) վրացական տնտեսվարողներին և իշխանություններին ցույց տալ էներգետիկ կախվածության այլընտրանքների բացակայությունը,

3) սոցիալ-տնտեսական գործիքների կիրառմամբ թուլացնել վրացական իշխանությունը:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի կիրառած պատժամիջոցները ոչ միայն չիրականացրին ռուսական կարճաժամկետ նպատակները, այլև երկարաժամկետ հեռանկարում թուլացրին ռուսական ազդեցությունը Վրաստանի և տարածաշրջանի նկատմամբ: Իսկ ռուսական ազդեցության թուլացումը նպաստեց Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքական ամրապնդմանը Վրաստանում և տարածաշրջանում:

Ենթագլխի երկրորդ հատվածում վեր են հանվել Իրանի նկատմամբ Արևմուտքի սահմանած պատժամիջոցների քաղաքական նպատակների փոխակերպումն ու պատժամիջոցների հետևանքները: Թեպետ Իրանի նկատմամբ ավելի քան չորս տասնամյակ կիրառվող արևմտյան պատժամիջոցները չեն հանգեցրել Իրանի կապիտուլյացիայի, սակայն որոշակիորեն սահմանափակել են նրա տնտեսական զարգացման ներուժը, ինչի պատճառով Իրանը ստիպված էր 2013թ.-ին գնալու փոխզիջումների: Սակայն, նշված պայմանավորվածություններից ԱՄՆ-ի միակողմանի հրաժարումն ու նոր պահանջների առաջքաշումը հանգեցրել է վստահության անդառնալի կորստի: Իրանի դեմ կիրառվող տնտեսական և քաղաքական պատժամիջոցների հետևանքով էականորեն սահմանափակվել են նաև Հարավային Կովկասում նրա տնտեսական և քաղաքական ազդեցության հնարավորությունները: Այդ պատճառով Իրանը չկարողացավ լրացնել տարածաշրջանում Ռուսաստանի թուլացող ազդեցությունը, ինչը պարարտ հող էր թուրքական ազդեցության հզորացման համար: Սակայն, Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցներն ու սրվող ԱՄՆ-Չինաստան հարաբերությունները զարգացման այլընտրանքային նոր հնարավորություններ են բացում Իրանի համար:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ՝ **«Ռեգիոնալ և գլոբալ պատժամիջոցների ազդեցությունը Հայաստանի վրա»** ենթագլխում վերլուծվել է Ռուսաստանի ու Իրանի նկատմամբ Արևմուտքի կիրառած պատժամիջոցների և

Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի կիրառած պատժամիջոցներով պայմանավորված առաջացող ուժային նոր հավասարակշռությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում: Անդրադարձել ենք նշված պատժամիջոցների հետևանքով առաջացած տնտեսական և քաղաքական կարճաժամկետ ու միջնաժամկետ ռիսկերին ու հնարավորություններին: Ենթագլխում ներկայացվում է, որ Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի կիրառած պատժամիջոցները տարիներ շարունակ բացասական ազդեցություն են ունեցել ոչ միայն հայ-ռուսական տնտեսական կապերի վրա, այլև մեծապես նպաստել են ադրբեջանական և թուրքական կապիտալի ներհոսքին, ինչով պայմանավորված՝ վրացական տնտեսությունը կախում է ձեռք բերել դրանցից:

Արևմուտքի պատժամիջոցներով պայմանավորված՝ Ռուսաստանի համար առավել կարևոր է դարձել համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի հետ, ինչը նվազեցնում է Հայաստանի արտաքին մանևրունակությունը:

Եզրակացություններ բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել ստորև բերվածները՝ ներկայացված ըստ համապատասխան հետազոտական խնդիրների՝

Հստակեցնելով պատժամիջոցների քաղաքագիտական տեսահայեցակարգերը եզրակացրել ենք՝

- ✔ Թեմայի մասին առկա համաշխարհային գիտական գրականության ուսումնասիրության վերլուծությամբ պարզել ենք, որ պատժամիջոցների ուսումնասիրությամբ զբաղվող արևմտյան հետազոտողների ակադեմիական անհամաձայնության հիմնական առարկան «պատժամիջոց» սահմանման շուրջ բանավեճն է, որը պայմանավորված է տարբեր հետազոտողների կողմից պատժամիջոցների քաղաքական նպատակների և «պատժամիջոց» եզրույթի սահմանման շուրջ ունեցած անհամաձայնությամբ: Մենք ձևակերպել ենք պատժամիջոցների քաղաքագիտական նոր սահմանում, որը գալիս է լրացնելու թեմայի մասին քաղաքագիտական գրականությունում առկա բացը: Մեր ձևակերպմամբ՝ *միջազգային պատժամիջոցը պետությունների կամ պետությունների միավորման կողմից միջազգային հարաբերությունների մեկ այլ սուբյեկտի նկատմամբ սահմանափակումների կիրառումն է, որը միտված է հարկադրելու պատժամիջոցի ենթարկվողին՝ փոփոխել իր քաղաքականությունը, սահմանափակել նրա կարողությունները կամ պատժել՝ կիրառողի ընկալմամբ անընդունելի վարքագիծ դրսևորելու համար*:
- ✔ Թեմայի վերաբերյալ ակադեմիական գրականության ուսումնասիրության արդյունքում պարզել ենք նաև, որ պատժամիջոցների հետազոտությամբ զբաղվող ոչ արևմտյան հետազոտողները հակված են առանձին պետությունների սահմանած պատժամիջոցները համարել միջազգային հարաբերությունների ոչ լեգիտիմ գործիք: Մասնավորապես, ռուսական

դպրոցի ներկայացուցիչների նման վերաբերմունքը պայմանավորված է հետազոտողների ներկայացրած պետության՝ պատժամիջոցներ կիրառելու ներուժի սահմանափակությամբ. քանի որ քաղաքական ուժի, հզորության և ազդեցության հարթությունում պետությունները միմյանցից տարբերվում են իրենց ռազմական, տնտեսական արդյունաբերական ներուժով և հզորություններով, ուստի պետություններն ունեն պատժամիջոցների միջոցով սեփական շահերն առաջ մղելու անհամաչափ հնարավորություններ:

- ✔ Հետազոտության արդյունքում հանգել ենք նաև այն եզրակացության, որ վերոնշյալ խնդրո առարկան վերաբերում է ոչ թե դե ֆակտո, այլ դե յուրե պատժամիջոցներին. ոչ բոլոր պետություններում են պատժամիջոցները ինստիտուցիոնալիզացված գործիք: Չնայած ռուս հետազոտողներն ու դիվանագիտական շրջանակները հաճախ են ԱՄՆ-ին մեղադրում միակողմանի պատժամիջոցների կիրառման մեջ՝ մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ ռուսական և ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ պատժամիջոցների գործածումն ունի զարմանալի նմանություն, քանի որ ՌԴ-ն բազմիցս կիրառել է տնտեսական ճնշման քաղաքականության գործիքակազմը:
- ✔ Պատժամիջոցների ինստիտուցիոնալացումը կապված է նաև այն կիրառող պետության պայմանագրային հասարակության տիպով, ինչպիսիք են արևմտյան հասարակությունները:
- ✔ Պատժամիջոցներ կիրառող պետությունների առաջնորդների և վերլուծաբանների ելույթների բովանդակային վերլուծության արդյունքում պարզել ենք, որ պատժամիջոցների կիրառումն ունի քաղաքական հետևյալ հիմնական նպատակները՝ թիրախ պետության քաղաքական համակարգի փոփոխություն, հյուծել, ազդանշել, վնասել նրա հեղինակությունը, ինչպես նաև բարձրացնել կիրառող պետության լեգիտիմությունը:
- ✔ ԽՍՀՄ փլուզումից հետո, ԱՄՆ-ի համաշխարհային ֆինանսատնտեսական գերակայության և համաշխարհային քաղաքականությունում «սև ասպետի» բացակայության պայմաններում, պատժամիջոցների կիրառումը շեշտակիորեն ակտիվացել էր, և սկսվել էր պատժամիջոցների կիրառման նոր շրջափուլ, որի պայմաններում ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցների ենթարկվող պետությունները դատապարտված էին ստագնացիայի: Սակայն Ռուսաստանի նկատմամբ 2022 թ.-ին սկսված պատժամիջոցների նոր ալիքն ի ցույց դրեց այդ շրջափուլի ավարտը և համաշխարհային քաղաքականության մեջ նոր «սև ասպետների» հայտնվելու փաստը՝ ի դեմս Հնդկաստանի, Չինաստանի և այլ տարածաշրջանային տերությունների:

Վերլուծելով Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների քաղաքական տրամաբանությունն ու ազդեցությունը գլոբալ քաղաքական գործընթացների վրա՝ եզրակացրել ենք հետևյալը.

- ✔ Պատժամիջոցների վերափոխման տրամաբանության ուսումնասիրությամբ հանգել ենք այն եզրակացության, որ ԱՄՆ-ի՝ ՌԴ-ի նկատմամբ կիրառած պատժամիջոցների կարևոր գործառույթներից մեկն է ներքաղաքական հաղորդակցությունը երկու մակարդակում՝ հորիզոնական, երբ պատժամիջոցների կիրառման նախաձեռնության համար միմյանց հետ մրցակցում են քաղաքական ուժերը, ինչպես Մագնիտսկու ակտի ընդունման ժամանակ էր, և ուղղահայաց, երբ իշխանությունները փորձում են պատժամիջոցների կիրառմամբ ցույց տալ իրենց վճռականությունը ներքին լսարանին:
- ✔ Անկախ Ուկրաինայում ծավալվող ռազմական գործողությունների արդյունքից՝ ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցները դեռ երկար ժամանակ չեն չեղարկվելու, քանի որ այսուհետ ՌԴ-ն ԱՄՆ-ի կողմից ընկալվում է որպես հիմնական սպառնալիք: ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցները միտված են լինելու ոչ միայն Ուկրաինայի միջազգայնորեն ճանաչված տարածքներից ռուսական զորքերի դուրսբերմանը և ռազմական գործողությունների դադարեցմանը, այլև Ռուսաստանի սոցիալ-տնտեսական համակարգի կազմալուծմանը և քաղաքական համակարգի փոփոխությանը, միջազգային մեկուսացման միջոցով նրա քաղաքական ազդեցության նվազեցմանը:
- ✔ Պատժամիջոցների սխալ մեխանիզմի գործարկումը ամրացնում է թիրախ պետության իմունային համակարգը, ինչպես 2014 թ.-ից հետո սկսված պատժամիջոցների ալիքը առիթ էր ստեղծել ռուսական ֆինանսական համակարգի համար մշակելու Ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման սեփական համակարգը: Այս համակարգի ներդրումը նպաստել էր ռուսական բանկային և ֆինանսական բանկային կազմակերպությունների դիմադրողականության բարձրացմանը, որի շնորհիվ համակարգը կաթվածահար չեղավ միջազգային փոխանցումների SWIFT համակարգից ռուսական խոշոր բանկերի դուրսմղման հետևանքով:
- ✔ Պատժամիջոցներին և դրանց դիմակայելուն ուղղված քայլերի հետևանքով Ռուսաստանը դառնալու է առավել ինքնաբավ: Սակայն, ի համեմատություն քաղաքական մրցակիցների, ռուսական տնտեսական և քաղաքական ներուժը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ոչ թե ավելանալու, այլ աստիճանաբար նվազելու է:
- ✔ Կարճաժամկետ հեռանկարում Ռուսաստանին հաջողվեց ապահովել տնտեսական և քաղաքական կայունությունը, որը պայմանավորված էր

Ռուսաստանի ռազմավարական պլանավորման ունակությամբ: Ռուսաստանին հաջողվեց օգտագործել Արևմուտքի տնտեսական հզորությունը՝ վերջինիս դեմ ստեղծելով էներգակիրների գնային ճգնաժամ, Ռուսաստանը նախապես ստեղծել էր ճկուն և պրոֆեսիոնալ ֆինանսական համակարգ, ռուսական հասարակության մոտ ձևավորված էր ճգնաժամերին դիմակայելու փորձ: Ռուսաստանը նաև ստեղծել էր տնտեսական այլընտրանքային մեխանիզմներ՝ ի դեմս ԵԱՏՄ-ի, Թուրքիայի, Չինաստանի և Հնդկաստանի հետ գործակցությանը:

- ✔ Սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանի համար առավել դժվար է լինելու դիմակայել տեխնոլոգիական մրցակցությանը՝ հաշվի առնելով նաև Ռուսաստանից «ուղեղների» արտահոսքը:
- ✔ Ռուսաստանի թուլացումը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում չի հանգեցնելու ուժային գլոբալ փոփոխության ի նպաստ ԱՄՆ-ի, որն անվիճելի ազդեցություն է ունեցել ռուս-ուկրաինական ճգնաժամի սրման հարցում: Կարճաժամկետ հեռանկարում ԱՄՆ-ին հաջողվելու է քաղաքական առավելություններ ստանալ ստեղծված իրավիճակում: Ստեղծված աշխարհաքաղաքական հանգամանքներում ԱՄՆ-ն ավելի է մեծացնելու տնտեսական ազդեցությունը ԵՄ-ի նկատմամբ: Սակայն անգամ Ռուսաստանի նկատմամբ տարած քաղաքական հաղթանակը ԱՄՆ-ի համար համարվելու է պյուրոսյան, քանի որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական ազդեցությունը հիմնական ախոյան Չինաստանի համեմատությամբ ոչ թե ավելանալու, այլ նվազելու է: Իսկ ԵՄ-ի կողմից ռուսական էներգակիրներից հնարավոր հրաժարումը հարված է լինելու սեփական հզորությանը:
- ✔ 2022 թ.-ից մեկնարկած հակառուսական պատժամիջոցների ռազմավարությունը նոր ազդանշան է Արևմուտքի գաղափարական հիմնական մրցակցին՝ Չինաստանին, պատշաճորեն պատրաստվելու աշխարհակարգի վերաձևման գործընթացում երկարաժամկետ դիմակայության ԱՄՆ-ի հետ: Ակնհայտ է, որ ապագայի հակամարտություններում պատժամիջոցների կիրառումը մեծանալու է, սակայն դրանց արդյունավետությունն առավել կասկածելի է դառնալու: Տարածաշրջանային առաջատար պետությունների կողմից պատժամիջոցներին դիմակայելու վճռականությունն արագացնելու է առանձին ինտեգրացիոն գործընթացներն առանձին տարածաշրջաններում:

Ուսումնասիրելով Հայաստանի և նրա համար ռազմավարական կարևորություն ունեցող պետությունների նկատմամբ կիրառվող

պատժամիջոցները և վերլուծելով նրանց ազդեցությունը Հայաստանի վրա՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

- ✔ Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պայմաններում Թուրքիան ոչ միայն զերծ է մնում վերջինիս նկատմամբ պատժամիջոցներ կիրառելուց, այլև ընդլայնում է առևտրատնտեսական կապերը ՌԴ հետ: Այդպիսով, Թուրքիան Ռուսաստանի համար ձեռք է բերում «սև ասպետի» նշանակություն, և ռուսական քաղաքական վերնախավն ամեն կերպ փորձելու է զերծ մնալ Թուրքիայի հետ հակասություններից: Սրանով պայմանավորված՝ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում Ռուսաստանը Թուրքիայի նկատմամբ առավել գործընկերային մոտեցում կորդեգրի:
- ✔ Արևմուտք-Ռուսաստան հակամարտության պայմաններում Հարավային Կովկասում ընդգծված կարևորություն է ձեռք բերել նաև Ադրբեջանը: Պատահական չէ, որ Ուկրաինայում ռազմական գործողությունների նախօրեին Մոսկվայում Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահները ստորագրեցին դաշնակցային հարաբերությունների մասին հռչակագիրը: Պատժամիջոցների պայմաններում Ռուսաստանի համար մեծ կարևորություն է ձեռք բերում Իրանի և Հնդկաստանի հետ առևտրաշրջանառության ապահովումը, իսկ Ադրբեջանն այս հարցում ռազմավարական կարևորություն ունի, քանի որ իր տարածքով պետք է անցնի «Հյուսիս-Հարավ» երկաթգիծը, որը միացնելու է Ռուսաստանը Հնդկական օվկիանոսին: Այդպիսով Ադրբեջանը ռազմավարական կարևորություն է ձեռք բերում Ռուսաստանի համար:
- ✔ Ռուսաստանի դեմ կիրառվող պաժամիջոցների արդյունքում տարածաշրջանում կտրուկ մեծացել է Թուրքիայի քաղաքական դերը և Ադրբեջանի տնտեսական կարևորությունն ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ԵՄ-ի և ԱՄՆ-ի համար: Ադրբեջանական էներգակիրներն առավել քան երբևէ կարևոր են դառնում ԵՄ-ի համար: Տարածաշրջանը դարձել է առավել մեծ մրցակցության գոտի, որտեղ խաչվում են Ռուսաստանի, Իրանի, Արևմուտքի և Թուրքիայի շահերը: Ստեղծված իրավիճակում առավել խոցելի է դարձել Հայաստանի ռազմաքաղաքական անվտանգությունը և սահմանափակվել է Հայաստանի կողմից Թուրքիային ու Ադրբեջանին զսպելու գործիքակազմը:
- ✔ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից կիրառվող պատժամիջոցները խորացրել են Հայաստանի սոցիալ-տնտեսական խնդիրները Արցախյան առաջին պատերազմի ժամանակ և հետպատերազմական շրջանում, սակայն վերջին երկու տասնամյակի ընթացքում Հայաստանի տնտեսությունը գտել է զարգացման այլընտրանքային ճանապարհը: Ժամանակակից աշխարհում

հեռահաղորդակցային և տեխնոլոգիական ոլորտների զարգացումն ու ապրանքային ավիափոխադրումների հասանելիությունը փոխում են պետությունների տնտեսության աշխարհագրությունը՝ կրճատելով տարածքային հեռավորությունները:

- ✔ Հայաստանի տնտեսական շրջափակումն ապագայում ստիպելու է հայաստանցի տնտեսվարողներին գնալ առավել բարձր տեխնոլոգիական զարգացման, բարձրարժեք ապրանքների վերամշակման և արտահանման ճանապարհով՝ կարևոր խթան դառնալով հասարակության և պետության զարգացման համար:
- ✔ Քաղաքական տեսանկյունից Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման շարունակությունը կարելի է համարել ոչ տրամաբանական հենց շրջափակման նախաձեռնողների համար, քանի որ շրջափակումն անարդյունավետ է, և Հայաստանը գտել է տնտեսական զարգացման այլընտրանքային ճանապարհ, իսկ Թուրքիան և Ադրբեջանը փաստացի զրկված են Հայաստանի վրա տնտեսական ազդեցության բանեցման գործիքակազմից:
- ✔ Հայաստանի շրջափակումը փաստացի դարձել է տնտեսական պրոտեկցիոնիզմի բնական գործիք, որը կարող է զարգացման հնարավորություն տալ հայաստանցի տնտեսվարողներին: Այժմ Հայաստանի ապաշրջափակումը և անգամ թուրքական կապիտալի կենտրոնացված ուղղորդումը Հայաստան չի կարող զգալի գործիքակազմ տրամադրել Թուրքիային՝ Հայաստանի նկատմամբ տնտեսական գերակայություն ունենալ և տնտեսական ճնշում գործադրելու միջոցով հասնել քաղաքական զիջումների կարճաժամկետ և միջնաժամկետ ապագայում:
- ✔ Գիտակցելով վերոնշյալը՝ Ադրբեջանն ու Թուրքիան փորձելու են ապագայում վերահսկողություն սահմանել Հայաստանն Իրանին ու Վրաստանին կապող ռազմավարական ճանապարհների նկատմամբ և Հայաստանին զրկել դիմադրողականությունից:
- ✔ Ռուսաստանի և Վրաստանի միջև երկաթուղային կապի փաստացի բացակայությունը և ավտոճանապարհային կապի սահմանափակությունը, ռուս-վրացական քաղաքական առճակատման հետևանքով ընդհատված և սահմանափակված տնտեսական կապերը ռազմավարական առումով կրճատել են Հայաստանի կարողություններն ու հնարավորությունները՝ տնտեսապես և քաղաքականապես չեզոքացնելու ադրբեջանաթուրքական մեկուսացման քաղաքականության հետևանքները:
- ✔ Վրաստանի շուրջ ձևավորված իրավիճակով պայմանավորված՝ հայկական Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի նախագիծը բախվում է Կովկասյան լեռնաշղթայի ճանապարհային

արգելապատնեշին: Այսպիսով՝ անհնարին է դառնում նշյալ տնտեսական ծրագրի կենսագործունեության հեռանկարը: Քաղաքական տեսանկյունից, նշյալ իրավիճակով պայմանավորված, անհնար է դարձել արևելք-արևմուտք (Ադրբեջան-Թուրքիա) դաշինքին հյուսիս-հարավ (Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան) դաշինքով հակադրվելը, իսկ Հայաստանն ու Վրաստանը զրկվել են Իրանն ու Ռուսաստանը միավորող հանգույց դառնալու հնարավորությունից:

- ✔ Ռուսաստանի՝ Վրաստանի նկատմամբ իրականացրած տնտեսական սահմանափակումներն ու ռուսական կապիտալի հեռացումը Վրաստանից ուղղակիորեն նպաստեցին վրաց-ադրբեջանական և վրաց-թուրքական հարաբերությունների վերափոխմանը ռազմավարական գործընկերության, իսկ Թուրքիայի և Ադրբեջանի տնտեսական ազդեցության մեծացումը էականորեն թուլացրել է ռուսական տնտեսական և քաղաքական ազդեցությունը Վրաստանի նկատմամբ:
- ✔ Արևմուտք-Իրան հարաբերությունների լարվածության պատճառով փոքրանում է Հայաստանի արտաքին մանևրայնության հնարավորությունը: Իսկ Իրանի նկատմամբ տասնամյակներ շարունակ կիրառվող պատժամիջոցների պատճառով երկիրն ունեցել է սահմանափակ տնտեսական և քաղաքական լծակներ Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի տարածաշրջանում ձևավորվող նոր ուժային հարաբերակցության ստեղծման վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից, որի հետևանքով Թուրքիան ձեռք է բերել զգալի ազդեցություն տարածաշրջանում՝ ի դեմս Վրաստանի և Ադրբեջանի վրա տնտեսական և քաղաքական ազդեցության մեծացման:

Հենվելով ատենախոսության եզրակացությունների վրա՝ ներկայացնում ենք հետևյալ կիրառական առաջարկությունները ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարության պլանավորման և իրականացման համար:

- Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքների ազդեցությունը Հայաստանի համար մեղմելու նպատակով անհրաժեշտ է ջանքեր գործադրել ռուսական էներգակիրների գների կայունությունը Հայաստանում պահպանելու համար:
- Պատժամիջոցների հետևանքով Հայաստան տեղափոխվող ռուսական մարդկային և ֆինանսական կապիտալի ներհոսքի շուրջ Ռուսաստանում հնչող կամ ձևավորվող բացասական խոսույթները մեղմել կամ վերացնել դիվանագիտական, հասարակական-քաղաքական և ակադեմիական երկխոսության միջոցով:

- Հարավային Կովկասում Թուրքիայի աստիճանաբար մեծացող ազդեցությամբ պայմանավորված առաջացող ուժային անհավասարակշռության վերականգնումը հնարավոր է միայն Իրանի հետ սերտ համագործակցության միջոցով, այդ պատճառով անհրաժեշտ է նրա հետ տնտեսական, քաղաքական, մշակութային և հասարակական կապերի սերտացում: Հայաստանը Իրանին կապող Հյուսիս-հարավ մայրուղու շինարարությունը պետք է համարել պետական գերակայություն:
- Անհրաժեշտ է ակտիվացնել ջանքերը Վրաստանում ադրբեջանա-թուրքական լոբբիին հակակշռելու և վրաց հասարակության շրջանում Հայաստանի հանդեպ վստահությունն ամրապնդելու ուղղությամբ: Ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ Հայաստանի կողմից ձեռնարկված քայլերը կարող են ունենալ որոշակի արդյունքներ՝ չնայած նախորդ անհաջող փորձին:
- Ռուսաստանի՝ պատերազմի մեջ գտնվելու հանգամանքն ու նրա նկատմամբ արևմտյան տեխնոլոգիական պատժամիջոցների առկայությունը դժվարացնելու են հայ-ռուսական ռազմատեխնիկական գործընկերությունը: Չինաստանի և Հնդկաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը կարող է որոշակիորեն մեղմել վերոնշյալ բացը: Հայաստանի բարեկամ համարվող որոշ արևմտյան պետություններից հնարավոր է «ոչ մահաբեր» ռազմատեխնիկական միջոցների ձեռքբերում:
- Բացառված չէ, որ ԱՄՆ-ում առաջանա հայկական լոբբինգի աջակցության կարիք՝ Հայաստանի կամ Հայաստանում գործունեություն ծավալող որոշ կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառում թույլ չտալու նպատակով: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հայկական լոբբինգի կանխարգելիչ աշխատանքների իրականացում, որը միտված կլինի ոչ թե պատժամիջոցների հետևանքների վերացմանը, այլ Հայաստանի վրա Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների բացասական ազդեցությունը մեղմելուն:
- Հայաստանի նկատմամբ հնարավոր պատժամիջոցներից խուսափելու նպատակով՝ անհրաժեշտ է սերտորեն համագործակցել նաև արևմտյան իշխանությունների, ֆինանսական կառույցների և Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների հետ՝ ի ցույց դնելով Հայաստանում գործող տնտեսական և ֆինանսական ինստիտուտների աշխատանքի թափանցիկությունը:
- Արևմուտք-Ռուսաստան գերզգայուն հարաբերությունների առկայության պայմաններում հայաստանցի քաղաքական և

հատկապես պետական պաշտոն զբաղեցնող գործիչները պետք է դրսևորեն մաքսիմալ զգուշություն պատժամիջոցների տեսանկյունից զգայուն թեմաներ շոշափելիս: Անհրաժեշտ է պաշտոնատար անձանց նախապես զգուշացնել պատժամիջոցների շրջանցմանը միտված հանրային ելույթների հնարավոր հետևանքների մասին:

- ՀՀ-ում ինֆորմացիոն տեխնոլոգիաների ու բեռնափոխադրող կազմակերպությունների, վերամշակող թեթև արդյունաբերության ու ավիափոխադրումների ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականությունն անհրաժեշտ է դիտարկել որպես գերակա ուղղություն Հայաստանի տնտեսության կայուն զարգացման համար:
- Հաշվի առնելով ՌԴ-ի և ԵՄ-ի միջև օդային սահմանի փաստացի փակումը՝ հայկական ավիափոխադրողների առջև բացվում են նոր հնարավորություններ՝ դառնալու ավիափոխադրումների հաբ, որը կապող օդային կամրջի դեր կունենա ՌԴ-ի և ԵՄ-ի միջև: Այսպիսով՝ հայկական բեռնափոխադրումների համար կարող է բացվել նոր՝ օդային ճանապարհ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Գոռ Պետրոսյան ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների քաղաքատնտեսական գործոնները | «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, 2022 № 3 (39), էջ 77-90:
2. Պետրոսյան Գոռ, «Ռուսաստանի հանդեպ տարվող պատժամիջոցային «պատերազմի» քաղաքական գործոններն ու գլոբալ հետևանքները», Պատմություն և Քաղաքականություն գիտական հանդես թիվ 3 (20), Երևան, 2022, էջ 74-91:
3. Պետրոսյան Գոռ, «Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերափոխումը», Տարածաշրջան և աշխարհ գիտավերլուծական հանդես, հատոր XIII, № 3, 2022, Երևան, էջ 29-37:
4. Պետրոսյան Գոռ, «Վրաստանի շուրջ ձևավորված պատժամիջոցային հանգույցի ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջայնացման գործընթացի վրա», Գիտական Արցախ № 3(14), 2022, Երևան, էջ 106-113:
5. Պետրոսյան Գոռ, «Միջազգային հարաբերություններում պատժամիջոցների կիրառման փոխակերպման պատմաքաղաքական հիմնահարցը», Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես թիվ 5(16), Երևան 2021, էջ 90-103:

6. Պետրոսյան Գոռ, «Պատժամիջոցների կիրառման նպատակներն ու մեխանիզմները ժամանակակից միջազգային հարաբերություններում», Գիտական Արցախ 4(7), 2020 Երևան, էջ 52-60:
7. Պետրոսյան Գոռ, «Պատժամիջոցները որպես արտաքին քաղաքականության իրականացման գործիք» ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2018, 1.3 (26), հասարակական և հումանիտար գիտություններ, էջ 283-291:

ГОР ЭДВАРДОВИЧ ПЕТРОСЯН

РОЛЬ САНКЦИЙ В ГЛОБАЛЬНЫХ И РЕГИОНАЛЬНЫХ ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ.

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”. Защита состоится 28 февраля 2023г., в 15:00 часов, на заседании специализированного совета 056 "Политология” ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

Резюме

В условиях постбиполярного миропорядка санкции стали одним из самых распространенных инструментов, используемых субъектами международных отношений. В течение последних десятилетий десятки политологических трудов были посвящены изучению санкций и данная тема стала важной субдисциплиной в теории международных отношений. С введением против России в 2022 году западных санкций в мировой политике начинается перераспределение баланса сил, что делает изучение санкций еще более актуальным как в теоретическом, так и в практическом плане.

Для Армении изучение санкций имеет еще более важное практическое значение, поскольку, параллельно с процессом обретения независимости, страна подверглась санкциям в виде экономической блокады, введенной соседними Азербайджаном и Турцией. Кроме этого, два стратегически важных для системы безопасности Армении государства – Россия и Иран – находятся под санкциями со стороны Запада, северный сосед Армении Грузия регулярно подвергается санкциям со стороны России. В связи с вышеизложенными обстоятельствами, цель данной диссертации – изучить и выявить глобальные и региональные политические трансформации, вызванные санкциями, и оценить их влияние на Республику Армения.

Методологическая основа исследования. Основная практическая часть исследования базируется на пяти отдельных тематических исследованиях (case study) применения санкций. Для проведения данного исследования использовались как качественные, так и количественные методы. Был проведен обзор академической литературы по проблематике исследования (literature review), а также сравнительный анализ аналитических работ ведущих западных и российских специалистов. Использование метода контент-анализа помогло проанализировать юридические и политические обоснования применения санкций разными государствами, а дискурс-анализ выступлений политических акторов помог выявить цели применения санкций. При проведении исследования были использованы такие первоисточники как устав ООН, официальные сообщения Белого дома и Кремля, законодательные акты и др. В рамках исследования также были применены количественные методы исследования, такие как анализ торгово-экономических данных и результатов социальных опросов.

Во введении диссертации обоснована актуальность темы, указаны степень научной разработанности темы и методические основы исследования, определены цель и задачи, предмет исследования.

В первой главе под названием «Санкции как предмет политологического исследования» сделана попытка разобраться в размытых понятиях и определить границы предмета, изучен процесс трансформации санкций, представлены теоретико-методологические основы применения санкций.

Во второй главе под названием «Санкции, примененные к Российской Федерации в контексте глобальных политических процессов» проанализированы политическая логика и влияние санкций на глобальные политические процессы. Чтобы измерить эффективность санкций в отношении России, мы проанализировали их политические цели, возможные краткосрочные, среднесрочные и долгосрочные политические последствия.

В третьей главе диссертации, «Влияние глобальной и региональной санкционной политики на Армению», рассмотрена политика блокады Азербайджана и Турции в отношении Армении. В третьей главе диссертации обобщаются политические последствия санкций, примененных Западом против России и Ирана, и Россией против Грузии, для региона и Армении. Основные результаты исследования представлены в разделе «Выводы».

GOR PETROSYAN

THE ROLE OF SANCTIONS IN GLOBAL AND REGIONAL POLITICAL PROCESSES.

Dissertation under 23.00.02 – "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Science

The public defense will take place on February 28 at 15:00 at the Yerevan State University, at 056 "Political Science" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Abstract

In a post-bipolar world, sanctions have become one of the most common tools used by actors in international relations. During the last decades, dozens of scientific articles have been devoted to sanctions, and this topic has become an important subdiscipline of international relations. In the light of Western sanctions imposed on Russia in 2022, redistribution of power is starting in world politics, which makes research on sanctions even more relevant both in theoretical and practical terms.

For Armenia, the study of sanctions is even more important in practical terms, since in parallel with the process of independence, Armenia was exposed to sanctions in the form of an economic blockade imposed on by neighboring Azerbaijan and Turkey. In addition, two strategically important states for Armenia's security system – Russia and Iran – are exposed to sanctions by the West, while Armenia's northern neighbor Georgia is regularly subject to sanctions by Russia. Therefore, the purpose of this dissertation is to explore and reveal the global and regional political transformations provoked by sanctions, and to assess their impact on the Republic of Armenia.

The methodological basis of the study. The main empirical part of the study is based on five separate case studies of sanctions. Both qualitative and quantitative methods were used to conduct the research. Apart from review of related academic literature, the author did comparative analysis of analytical pieces by leading Western and Russian experts. Using the method of content analysis, the author analyzed the legal and political justifications for the application of sanctions by different countries, while with discourse analysis of political actors' speeches the author tried to identify the goals of sanctions.

Throughout the study, the author used a number of primary sources such as the UN charter, official statements by the White House and the Kremlin, legislative acts, etc. Quantitative research methods were also applied, namely the analysis of trade and economic data. In addition, the results of public surveys were analyzed.

In the dissertation introduction, the author wrote about the relevance of the topic, described in detail the methodology used for the research, and defined the goal and objectives, the subject of research.

In the first chapter of the paper, entitled "Sanctions as a Subject of Political Science Research," the author tried to specify the fuzzy concepts and define boundaries of the subject, examined the process of transformation of sanctions, and presented theoretical and methodological foundations for the application of sanctions.

In the second chapter of the study, "Sanctions Imposed on the Russian Federation in the Context of Global Political Processes," the author analyzed the political logic and impact of the sanctions on global political processes. To measure the effectiveness of the sanctions imposed on Russia, the author analyzed the political goals of the sanctions against Russia, their possible short-, medium-, and long-term political consequences.

The third chapter of the dissertation, "The Impact of Global and Regional Sanctions Policies on Armenia," examines the blockade policy of Azerbaijan and Turkey towards Armenia. The third chapter of the dissertation summarizes the political repercussions of the sanctions, applied by the West against Russia and Iran, and those imposed by Russia on Georgia, for the region and Armenia. The main results of the study are presented in the "Conclusions."